Գրական
Սամանակ
№100 (2797), [illegible], հունիս 28 2011թ.

ՎԱՂԱԺԱՄ ՄԱՐՎԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՐԵՐԸ ՎԱՂԱԺԱՄ ԵՆ

ԹՈՂ ՎԱՐՁԱՏՐԵՆ՝ ՏԱԼԸ ԼԱՏԻ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ընդհանուր ժողովը երեկ կանաչ լույս վառեց գտրեռոդ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի առջև՝ հնարավորություն ընձեռելով նրան ևս 5 տարի ղեկավարելու Ակադեմիայի համակարգը:

Ընդհանուր ժողովը, որի ընթացքում ընտրվել է նաև ԳԱԱ փոխնախագահ ու ակադեմիկոս-քարտուղար, անցկացվել է փակ՝ առանց լրագրողների ներկայության, թեպետ ավելի ուշ ԳԱԱ վերընտրված նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն այդ ընտրությունները հաճարեց Հայաստանում անցկացվող ամենաժողովրդավարական ընտրությունները: Ակադեմիայի նախագահի դաշտոնում, ինչպես եւ սպասվում էր, առաջադրվել է նաև մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լենսեր Աղալովյանը: Ընտրությունների ավարտին նա հրաժարվեց որեւէ մեկնաբանություն տալ՝ գնահատելու դրանց ընթացքն ու արդյունքները: Իսկ ավելի վաղ Աղալովյանը մեզ հետ զրույցում հայտարարել էր, թե այստեղ փայլուն կերպով օգտագործվում են ադմինիստրատիվ ռեսուրսները՝ ինքնավերարտադրության նպատակով: Մինչ ընտրությունները երեկ ընթանում էին, մենք զրուցեցինք ԳԱԱ գիտաշխատողների հետ, եւ նրանց շրջանում նույնպես իշխում էր այն կարծիքը, թե Ռադիկ Մարտիրոսյանն ընտրությունների է գնացել՝ «գրպանում ունենալով 41 ձայն»: Խոսքը վերաբերում է ԳԱԱ նույնաթիվ ստորաբաժանումներին, որոնց ներկայացուցիչներն առաջին անգամ քվեարկելու հնարավորություն են ստացել, եւ այդ ստորաբաժանումները հիմնականում ներկայացրել են տնօրենները: Վերջիններս իրենց դաշտոններում առաջիկայում վերընտրվելու խնդիր ունեն, ուստի եւ ըստ Ակադեմիայի անդամների, նրանց ձեռնտու է այդ գործում աջակցություն ստանալու խոստման դիմաց քվեարկել Ռադիկ Մարտիրոսյանի օգտին: Անդրադառնալով ադմինիստրատիվ ռեսուրսներն օգտագործելու մեղադրանքին՝ ԳԱԱ վերընտրված նախագահը մեզ հետ զրույցում նկատեց. «Ընտրվի դաշտոնում աշխատող մարդը մեղք չունի, որ ինքը համ դաշտոնավարում է, համ թեկնածու է: Կամ՝ դիտի մի օրենք լինի, որ բոլոր դաշտոնյաները, որոնք դեմք է մասնակցեն ընտրություններին, մի տարի առաջ գործից ազատվեն: Լավ կլինի, որ վարձատրեն, նա տանը նստի, ոչ մի ադմինիստրատիվ ռեսուրս չօգտագործի եւ այլն»: «Այսինքն՝ հնարավո՞ր չէ աշխատել, բայց չօգտագործել այդ ռեսուրսը»,- հետաքրքրվեցինք Ռադիկ Մարտիրոսյանից: «Ի՞նչ է նշանակում օգտագործել: Եթե բարեում են ինձ, ունեն խնդիր եւ գալիս են այստեղ ինչ-որ հարց լուծելու, դա դարձավ... Նույն բանն էլ ինքն է անում, գնում է նրանց տները: Ես ոչ մեկին ոչ զանգել եմ, ոչ մեկի հետ խոսել եմ: Ի՞նչ է նշանակում ադմինիստրատիվ ռեսուրս, չեմ հասկանում»,- դատասխանեց ԳԱԱ նախագահը՝ հավելելով, որ ինքը չի կարող ԳԱԱ որեւէ ինստիտուտի տնօրենի խոստանալ ու երաշխավորել, թե նա կվերընտրվի իր դաշտոնում, քանի որ ընտրություններ են կազմակերպվում մի քանի մակարդակում: Իսկ ինչ վերաբերում է իր վերընտրությանը նոպաստած հանգամանքներին, ապա Ռադիկ Մարտիրոսյանը կարծում է, որ այդ առումով հաջողությունը դայմանավորված է նախորդ տարիների աշխատանքով: «Մեր անցած հինգ տարիների ընթացքում մենք ունեցել ենք լուրջ հաջողություններ, որդիսիք չի ունեցել Ակադեմիան նախորդ որեւէ 5-ամյակի ընթացքում»,- հայտարարեց նա: Թվարկելով մի շարք ձեռքբերումներ՝ ԳԱԱ նախագահը դնդեց, թե իր հասցեին քննադատությամբ հանդես եկողները միշտ միեւնույն մարդիկ են, որոնց թիվը շատ փոքր է՝ 4-5 հոգի, ու կայուն: Այս մարդկանց անունները նույնպես Ռադիկ Մարտիրոսյանը հիշատակեց՝ չնշելով Լենսեր Աղալովյանին: Մենք էլ նկատեցինք, որ վերջինս օրեր առաջ հայտարարել էր, թե Ակադեմիան հեղինակազրկվում է եւ ժողովրդի կողմից ընկալվում որդես մի ինչ-որ բեռ: Ասել է թե՝ ԳԱԱ նախագահի մատնանշած դժգոհողների թիվն այնքան էլ սահմանափակ ու կայուն չէ: «Ես միայն մի բան կասեմ նրա խոսքերին ի դատասխան (ընդհանրապես իմ սովորությունների մեջ չկա իմ մրցակցին վատ բան ասել եւ այլն: Հայտնի էր վաղուց, որ նա դեմք է մրցակից լիներ, բայց որեւէ տեղ ես նրա մասին բացասական կամ վատ բան չեմ ասել): Ավելի լավ է՝ ինքն իր արժանիքների մասին խոսի՝ համոզելու համար, քան թե վարկաբեկի ուրիշին, որն իրատես այդդես չէ: Մեր Ակադեմիան այսօր վարկաբեկված չէ: Հայտնի գրողը գրել է՝ խոսակցություններն իմ վաղաժամ մահվան մասին շատ շուտ են: Ընդհակառակը, մեր Ակադեմիան ունի բավականաչափ բարձր իմիջ: Այնպես որ, քննադատողները լավ վիճակից չեն քննադատում: Այդ քննադատողները արեւի տակ իրենց տեղն են ուզում ունենալ, բայց նրանց մեջ շնորհալի գիտնականներ կան»,- ասաց Ռադիկ Մարտիրոսյանը:



Հ.Գ. Նշենք, որ ԳԱԱ նախագահի դաշտոնում ընտրվելուց հետո Ռադիկ Մարտիրոսյանն առաջադրել է նաեւ փոխնախագահի եւ ակադեմիկոս-քարտուղարի 1-ական թեկնածու: Առաջին դեդքում վերընտրվել է Յուրի Շուքուրյանը, իսկ ակադեմիկոս-քարտուղարի դաշտոնում Արամ Շահինյանին փոխարինել է ԳԱԱ գիտության զարգացման հիմնադրամի տնօրեն Հրանտ Մաթեւոսյանը:

ԱՆՆԱ ՉԱԽԱՐՅԱՆ